
ԱՌԻԴԻՏԻ ՇՈՒԿԱՅԻ ԿԵՆՏՐՈՆԱՑՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

ԳՆԵԼ ԽԱՉԱՏՏՐՅԱՆ

Աուդիտի համաշխարհային շուկայում գերիշխում են աուդիտորական չորս կազմակերպություններ՝ **Խոշոր քառյակը** (Big 4)¹: Աուդիտի շուկայի կենտրոնացման հիմնախնդիրները ուսումնասիրել են բազմաթիվ գիտնականներ, ոլորտը կարգավորող կառույցներ և մասնագետներ²: Նրանք հետազոտել և վերլուծել են շուկայի այդօրինակ կենտրոնացվածության պատճառները, կենտրոնացումից բխող վտանգները և շահերը, ինչպես նաև առաջարկել են գործիքներ կենտրոնացումից բխող ռիսկերին արձագանքելու նպատակով:

Աուդիտի շուկայի կենտրոնացվածությանը նպաստում է նաև հայտարարվող մրցույթներին մասնակցելու իրավունք ունեցող աուդիտորական կազմակերպությունների սահմանափակումը, այսպես կոչվող՝ **կարճ ցանկերի** (short-list) կիրառումը: Նկատենք, որ ֆինանսական հաշվետվությունների աուդիտի պարտադիր պահանջ ունեցող նման խոշորագույն կազմակերպությունների (Public Interest Entities (PIEs) - հանրային նշանակալի կազմակերպություններ (ՀՆԿ-ներ)) աուդիտորական ծառայությունների գծով վճարը կազմում է աուդիտորական շուկայի հասույթի ամենախոշոր մասը: ՀՆԿ-ներից շատերը արժեթղթերի շուկայի ցուցակում ընդգրկված կազմակերպություններ են, ֆինանսաբանկային ոլորտի կազմակերպություններ, ինչպես նաև ֆինանսական առավել խոշոր արդյունքներ գրանցած կազմակերպություններ:

Նման կարճ ցանկերը, որոնք սահմանվում են իրավական ակտերով, պայմանագրային կամ այլ պահանջներով, կիրառվում են նաև ՀՀ-ում: Դրանց ներդրումը արդարացված է, քանի որ ՀՆԿ-ների աուդիտը հանրության համար ավելի կարևոր է, իսկ միջազգային խոշոր ցանցի անդամ չհանդիսացող աուդիտորական կազմակերպություններն ունեն բարձր որակի ծառայություն մատուցելու սահմանափակ կարողություն³:

¹ Տե՛ս Consultants 500, Top accounting firms –Global & regional rankings, Dec 2017, <<https://knowledge.consultants500.com/hc/en-us/articles/115004286013-Top-Accounting-Firms-Global-Regional-Rankings->>

² Տե՛ս **N. Sawan, I. Alsaqqa**, Audit firm size and quality: Does audit firm size influence audit quality in the Libyan oil industry?, 2013, African Journal of Business Management, Vol. 7(3), pp. 213-226

³ Տե՛ս **C. Shore, S. Wright**, How the Big 4 got big: Audit culture and the metamorphosis of international accountancy firms, May 2018, Sage Journals.

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ՀՀ-ում հրապարակվող աուդիտորական բազմաթիվ եզրակացություններ չեն համապատասխանում աուդիտի միջազգային ստանդարտների (ԱՄՍ) և ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) պահանջներին, իսկ երբեմն էլ այդ եզրակացությունը տրամադրվում է առանց աուդիտ իրականացնելու (այսպես կոչված՝ «աուդիտորական եզրակացության վաճառք»): Նշված թերությունները հիմնականում պայմանավորված են աուդիտորական գործունեության նկատմամբ վատ վերահսկողությամբ: Հավելենք նաև, որ աուդիտորական կազմակերպությունների մի մասը չունի բավարար ունակություն ու փորձառություն իրականացնելու ԱՄՍ-ների բարձրակարգ պահանջներին համապատասխան աուդիտ⁴: Աուդիտի ոլորտում միջազգային զարգացումները փաստում են, որ ՖՀՄՍ-ների և ԱՄՍ-ների շարունակ բարդացող պահանջները ապահովելու համար աուդիտորական կազմակերպությունները կարիք ունեն միանալու միջազգային ճանաչված որևէ ցանցի:

ՀՀ-ում աուդիտի որակի վերաբերյալ կատարված ուսումնասիրությունները նույնպես փաստում են վերոնշյալ խնդիրը: Նույնիսկ ցուցակված կազմակերպությունների վերաբերյալ ՀՀ-ում հրապարակված աուդիտորական եզրակացությունները երբեմն քիչ են համապատասխանում ԱՄՍ-ների պահանջներին⁵: Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ անբավարար որակը առավել տարածված է այն աուդիտորական կազմակերպություններում, որոնք միջազգային խոշոր աուդիտորական կազմակերպությունների ցանցի անդամ չեն:

2014 թ. հրապարակված գիտական հետազոտություններից մեկում դիտարկվել է միջազգային աուդիտորական Խոշոր քառյակի և այլ աուդիտորների իրականացրած աուդիտի որակի համադրում⁶: Որպես «աուդիտի որակ» են դիտարկվել ֆինանսական հաշվետվություններում կատարված ճշգրտումները: Հետազոտությունը փաստել է, որ Խոշոր քառյակի տված եզրակացությունում ֆինանսական հաշվետվությունների ճշգրտման հավանականությունը շատ ավելի քիչ է, քան այլ աուդիտորների կատարած աշխատանքներում: Սակայն այդ հետազոտությունը էական տարբերություն չի բացահայտել Խոշոր քառյակի և միջին խոշորության («Խոշոր տասնյակ») մնացած վեց աուդիտորական ընկերությունների տրամադրած «աուդիտի որակի» միջև:

Վիճակագրությունը ցույց է տալիս, որ հանրության և պետության համար առավել կարևոր կազմակերպությունների աուդիտի շուկայում

⁴ Տե՛ս **Գ. Խաչատրյան**, Աուդիտի եզրակացության նշանակալի փոփոխությունը և ՀՀ-ում կիրառումը, «Այլընտրանք» եռամսյա գիտական հանդես, 2017 #3, <<http://alternative.am>>

⁵ Տե՛ս **Գ. Խաչատրյան**, Առանցքային աուդիտորական հարցերի կիրառումը ՀՀ-ում, «Ֆինանսներ և էկոնոմիկա», #9-10 (205-206), 2017, էջ 35-37:

⁶ Տե՛ս **J. Eshleman, P. Guo**, Do Big 4 Auditors Provide Higher Audit Quality after Controlling the Endogenous Choice of Auditor?, Nov 2014, Auditing: A Journal of Practice & Theory, Vol. 33, № 4, էջ 197-219:

ակնհայտ գերիշխող է Խոշոր քառյակը: Դա է վկայում Նյու Յորքի արժեթղթերի շուկայում (New-York Stock Exchange, NYSE) ցուցակված ամենախոշոր 500 կազմակերպությունների (S&P 500) աուդիտն իրականացնող աուդիտորական կազմակերպությունների 2017 թ. վիճակագրությունը⁷:

Աղյուսակ 1

S&P 500-ի աուդիտի բաշխումը

Աուդիտորական կազմակերպություն	քանակ	%
Փրայսվոթերհաուզկուպերս (PricewaterhouseCoopers)	152	30.4
Էրնսթ ընդ Յանգ (Ernst and Young)	150	30.0
Դելոյթ (Deloitte)	101	20.2
Քեյ-Փի-Էմ-Ջի (KPMG)	94	18.8
Գրանթ Թորրնթոն (Grant Thornton)	2	0.4
Բի-Դի-Օ (BDO)	1	0.2
	500	100.0

Համաձայն նշված վիճակագրության, համաշխարհային աուդիտորական կազմակերպությունների Խոշոր քառյակը իրականացնում է այդ ոլորտի գործունեության 99.4%-ը (497-ը 500-ից): Այսինքն՝ միջազգային աուդիտորական խոշոր ցանցերի վեցյակից դուրս աուդիտորական ոչ մի ընկերություն վստահություն չի ներշնչում ֆինանսական ներդրողների շրջանում: Նույն պատկերն է նաև Եվրոպական միության (ԵՄ) երկրներում: ԵՄ ցուցակված խոշոր 633 կազմակերպությունների աուդիտն իրականացնող կազմակերպությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանց 98%-ի աուդիտն իրականացնում է Խոշոր քառյակը, իսկ մեկական տոկոսը՝ Բի-Դի-Օ-ն կամ Գրանտ Թորնթոնը⁸:

Աղյուսակ 2

Ցուցակված կազմակերպությունների եվրոպական աուդիտի շուկայի բաշխվածությունը

Աուդիտորական կազմակերպություն	քանակ	%
Փրայսվոթերհաուզկուպերս	190	30
Քեյ-Փի-Էմ-Ջի	159	25
Դելոյթ	142	22
Էրնսթ ընդ Յանգ	131	21
Բի-Դի-Օ	6	1
Գրանթ Թորրնթոն	5	1
	633	100

⁷ Տե՛ս **J. Pakaluk**, Auditor Market Share of the S&P 500, 27.02.2017, Audit Analytics; <<http://www.auditanalytics.com/blog/auditor-market-share-of-the-sp-500/>>

⁸ Տե՛ս **S. Dixon**, EU Auditor market share: 2017 Audit Reports, May 2018, <<https://www.auditanalytics.com/blog/eu-auditor-market-share-2017-audit-reports/>>

Աշխարհի արժեթղթերի մյուս ամենախոշոր բորսաների վիճակագրությունների ուսումնասիրությունները նույնպես փաստում են աուդիտի շուկայի նմանատիպ կենտրոնացվածություն: Հետևաբար հանրության համար կարևոր կազմակերպությունների, ինչպիսիք են ՀՆԿ-ները, աուդիտորական կազմակերպության ընտրության հարցում միջազգային պրակտիկայում գործնականում ընդունված է կարճ ցանկերի կիրառումը: Վիճակագրությունները հավաստում են, որ բիզնես աշխարհում աուդիտորների գծով կարճ ցանկի կիրառումը ՀՆԿ-ների ֆինանսական հաշվետվությունների աուդիտի որակի ապահովման կանխարգելիչ դրական ազդեցություն ունեցող համընդհանուր ընդունված գործիք է: Կարճ ցանկեր կիրառում են նաև դոնոր և վարկային միջազգային խոշոր կազմակերպությունները, օրինակ՝ Համաշխարհային բանկը, Եվրոպական միությունը, Միավորված ազգերի կազմակերպությունը, Ասիական զարգացման բանկը և այլն:

Նկատենք, որ ՀՀ-ի աուդիտորական շուկայում նույնպես հիմնական մասնաբաժինը (աուդիտորական ծառայությունների դիմաց գանձվող գումարի 80%-ից ավելի) պատկանում է միջազգային խոշոր վեցյակը ներկայացնող կազմակերպություններին⁹: Մասնավորապես, 2017 թ. ՀՀ-ում աուդիտորական կազմակերպությունների իրականացրած աուդիտորական և հարակից այլ ծառայությունների մատուցումից ստացված հասույթի բաշխվածությունը ամփոփված է աղյուսակ 3-ում¹⁰:

Աղյուսակ 3

ՀՀ-ում գործող աուդիտորական կազմակերպությունների հասույթի ցուցանիշը 2017 թ.

Աուդիտորական կազմակերպություն	մլն դրամ	%
Գրանթ Թորընթոն	1,145	21
Քեյ-Փի-Էմ-Ջի	1,056	19
Էրնսթ ընդ Յանգ	746	13
Փրայսվոթերհաուզ կուպերս	616	11
Դելոյթ	430	8
Բի-Դի-Օ	423	8
Մնացյալ 25 աուդիտորական կազմակերպությունները միասին	1,120	20
	5,536	100

⁹ Տե՛ս **H. Mnatsakanyan**, The modern trends of the Auditing Market Formation in the Republic of Armenia, «Բանբեր Երևանի Համալսարանի. Սոցիոլոգիա, Տնտեսագիտություն», № 138.5, Եր., 2012, էջ 75-81:

¹⁰ Տե՛ս «Ասատրյան» ՍՊԸ, Հայաստանի աուդիտի շուկայի վերլուծություն, հունիս 2018, <<http://asatryans.com/armenian-audit-market-analysis-am/>>

Հանրության համար ավելի կարևոր կազմակերպությունների աուդիտի նպատակով կարճ ցանկերի կիրառումն ըստ էության անխուսափելի անհրաժեշտություն է, հատկապես այն դեպքում, երբ տվյալ երկրում (մասնավորապես ՀՀ-ում) աուդիտի որակի արտաքին վերահսկման արդյունավետ համակարգ դեռևս մշակված չէ, կամ համակարգը ունի կարևոր բացթողումներ և թերություններ: Կարճ ցանկի կիրառումը արդյունավետորեն կկանխարգելի նաև Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) աուդիտորական համաձայնագրից բխող ռիսկերը, քանի որ այդ համաձայնագրի ընդունումից հետո ԵԱՏՄ-ում գործող աուդիտորական հազարավոր կազմակերպություններ ՀՀ-ում կստանան աուդիտ իրականացնելու իրավունք¹¹:

ՀՀ-ում այժմ կան աուդիտորական կազմակերպությունների կարճ ցանկերի կիրառման իրավական որոշ կարգավորումներ: Մասնավորապես բանկերի, ապահովագրական կազմակերպությունների և ֆինանսական ոլորտի որոշ կազմակերպությունների աուդիտի դեպքում ՀՀ կենտրոնական բանկը սահմանում է աուդիտորական կազմակերպության նվազագույնը 5 տարվա փորձ, բացառությամբ այն դեպքերի, երբ տվյալ աուդիտորական կազմակերպությունը «միջազգային ճանաչում ունեցող աուդիտորական կազմակերպություն է և Համաշխարհային հաշվապահական տեղեկագրում հրապարակված ու <http://firm-rankings.vrl-financial-news.com/> կայքում տեղադրված ցանկում ներառված է որպես ըստ եկամտաբերության՝ լավագույն 10 աուդիտորական կազմակերպություն»: Սակայն նկատենք, որ այս պահանջը պարունակում է լուրջ անհստակություններ:

ՀՀ-ում այժմ գործում են նաև միջազգային դոնոր կամ ֆինանսավորող կազմակերպությունների կողմից տրամադրված դրամաշնորհների կամ վարկերի աուդիտորների կարճ ցանկեր՝ ֆինանսավորող կազմակերպությունների ձեռնարկած կանխարգելիչ միջոցառում:

Աուդիտորական կազմակերպությունների ընտրության հարցում կարճ ցանկերի կիրառումը նաև գիտական, իրավական և տնտեսական լիարժեք հիմնավորվածության կարիք ունի: Այն կարող է քննադատության ենթարկվել հետևյալ պատճառներով.

- Կարճ ցանկը ընդամենը կանխարգելիչ միջոցառում է, սակայն չի կարող տալ հավաստի տեղեկատվություն աուդիտի որակի վերաբերյալ: Բոլոր դեպքերում անհրաժեշտ է երկրում ներդնել և պահպանել աուդիտի որակի արտաքին վերահսկման արդյունավետ համակարգ: Այս տրամաբանական փաստարկը հիմնավորվում է նաև գիտական հետազոտություններով, որոնք ցույց են տալիս, որ այն երկրներ-

¹¹ St' u «Евразийский экономический союз», Соглашение об аудиторской деятельности на территории Евразийского экономического союза, Проект, 2017, <https://docs.eaunion.org/ria/ru-ru/0121856/ria_02022017_doc.pdf>

րում, որտեղ չկա աուդիտի որակի արդյունավետ վերահսկողության համակարգ, չկա նաև Խոշոր քառյակի աուդիտորների և այլ աուդիտորների որակի միջև էական տարբերություն¹²:

- Բնական հարցադրում. «Ինչո՞ւ խոշոր տասնյակ, և ոչ թե՛ խոշոր քառյակ, քսանյակ կամ հարյուրյակ»: Արդյո՞ք կարճ ցանկերի ներդրումը չի առաջացնի անբարեխիղճ մրցակցություն¹³:

- Աուդիտորական բոլոր կազմակերպությունները ենթակա են լիցենզավորման: Ինչքանո՞վ է այդ դեպքում պետության կողմից օրենքով պարտադրված աուդիտում նրանց մասնակցության արգելումը իրավաբանորեն արդարացված:

- Խոշոր տասնյակի կամ այլ կարճ ցանկի սահմանումը պետության կողմից նշանակալի բացասական ազդեցություն է թողնում տեղական, ոչ միջազգային աուդիտորական այլ կազմակերպությունների կամ այդ ցանկից դուրս գտնվող, բայց միջազգային ցանցի անդամ կազմակերպությունների զարգացման վրա:

- Կարճ ցանկի ներդրումն էլ ավելի է կենտրոնացնում աուդիտի շուկան աուդիտորական մի քանի խոշոր կազմակերպությունների ձեռքում:

- Կարճ ցանկի սահմանումը և հրապարակումը կարող է չհիմնավորված ավելորդ վստահության կարծիք առաջացնել հանրության շրջանում:

Այս քննադատությունների, ինչպես նաև Խոշոր քառյակի գերիշխանությունից խուսափելու նպատակով ՀՆԿ-ների վերաբերյալ ԵՄ-ի հրահանգը սահմանեց, որ ԵՄ-ում աուդիտի ենթարկվող կազմակերպության և երրորդ անձանց միջև աուդիտորի ընտրությունը սահմանափակող կամ որոշակի աուդիտորի կամ աուդիտորների կարճ ցանկ սահմանող պայմանագրային դրույթները առ ոչինչ են¹⁴:

ԵՄ-ն սահմանում է, որ ՀՆԿ-ների աուդիտորների ընտրությունը կատարվի մրցույթային համակարգով, որին կմասնակցեն աուդիտորական հրավիրված կազմակերպություններ: Աուդիտի ենթարկվող կազմակերպության հանձնախումբը որոշում կայացնող մարմնին, օրինակ՝ տնօրենների խորհրդին կամ բաժնետերերի ժողովին է ներկայացնում մրցույթը շահած նվազագույնը երկու աուդիտորի այլընտ-

¹² Տե՛ս **J. Francis, D. Wang**, The Joint effect of investor protection and Big 4 audits on earnings quality around the World, Spring 2008, Contemporary Accounting Research, Vol. 25, № 1, էջ 157-191:

¹³ Տե՛ս **Մ. Միքայելյան**, Անբարեխիղճ մրցակցությունը և Հայաստանում դրա կարգավորման մարտահրավերները, «Բանբեր Երևանի համալսարանի. Սոցիոլոգիա, Տնտեսագիտություն», 2017, № 3 (24), էջ 11-18:

¹⁴ Տե՛ս «Specific requirements regarding statutory audit of public-interest entities and repealing Commission Decision 2005/909/EC», Regulation (EU) № 537/2014 of the European Parliament and of the Council of 16 April 2014, Article 16.6:

րանք՝ նշելով իր նախընտրած աուդիտորին: Սակայն նկատենք, որ ԵՄ այս իրավական ակտով սահմանված ընտրության համակարգը մասամբ հստակ չէ. օրինակ՝ ՀՆԿ-ն կարող է հրավիրել ցանկացած աուդիտորական կազմակերպության, սակայն մրցույթին մասնակցելու ընթացակարգը չպետք է բացառի ՀՆԿ-ների աուդիտից մինչև 15% հասույթ ունեցող աուդիտորներին: Այս համատեքստում անորոշ է «չբացառել» բառի բովանդակությունը¹⁵: ԵՄ-ի այս պահանջը չի սահմանափակում ՀՆԿ-ներին մրցույթի հրավիրել միայն իրենց հետաքրքրող աուդիտորական կազմակերպությունների. դրա վառ վկայություն է ԵՄ-ում ցուցակված կազմակերպությունների աուդիտորների ցանկը (տե՛ս աղյուսակ 2), որի 98%-ը Խոշոր քառյակից է:

Նկատենք, որ աուդիտորական կազմակերպության ընտրության հարցում ՀՆԿ-ները չպետք է առաջնորդվեն միայն ամենացածր գնով: Դրա վառ վկայությունն է այն, որ ՀՀ-ում աուդիտորական ծառայությունների ձեռքբերման նպատակով իրականացվող հրապարակային մրցույթներին մասնակցում են առավելապես փոքր աուդիտորական կազմակերպությունները՝ առաջարկելով բավականին ցածր, ոչ ողջամիտ գներ: Գինը կարող է լինել ընտրության գործոններից մեկը, սակայն անհրաժեշտ է, որ աուդիտորի փորձառությունը և ունակությունները նույնպես դառնան գնահատման համակարգի կարևոր պահանջ: Օրինակ՝ կարող է կիրառվել գին-որակ ընթացակարգ:

Բանալի բառեր – *ԱՄՄ-ներ, ՖՀՄՄ-ներ, աուդիտի որակ, աուդիտի շուկա, աուդիտորական միջազգային ցանցեր, աուդիտորական կազմակերպությունների «կարճ-ցանկեր»*

ГНЕЛ ХАЧАТРИАН – Проблемы концентрации рынка аудита. – В статье показано, как сконцентрированы на рынке аудита крупнейшие сетевые аудиторские фирмы, и проанализирован короткий список аудиторов, проверяющих финансовую отчетность организаций общественного значения. Анализ свидетельствует, что аудиторы, не входящие в международные сети крупных специализированных фирм, не в силах удовлетворять сложным, постоянно развивающимся требованиям МСФО и МСА. Это обстоятельство и объясняет, почему рынок сконцентрирован вокруг крупнейших сетевых аудиторов. С другой стороны, короткий список аудиторов может привести к ограничению конкуренции на рынке.

Ключевые слова: *МСА, МСФО, качество аудита, международные аудиторские сети, рынок аудита, короткие списки аудиторов*

GNEL KHACHATRYAN – Audit Market Concentration Issues. – In this article, the world audit market concentration by the biggest audit network firms is investigated; as well as justification of applying auditors' short-list for PIEs financial state-

¹⁵ Տե՛ս **Ernst & Young**, «EU Audit legislation, FAQs -10 June 2016», Publications.

ments audits is analyzed. Professional research and analyses conclude that complying complex and continually developing requirements of the IFRSs and ISAs are out of capabilities of the auditors that are not members of the international big audit firm networks. This circumstance justifies the concentration of the audit market into the biggest global audit network firms. From the other side, applying auditors' short-list could result in limiting the competitive market, as well as the society, could consider it as a non-justified market limitation measure.

Key words: *ISAs, IFRSs, audit quality, international audit networks, audit market, auditors' short-lists*

Ներկայացվել է՝ 20.02.2019, գրախոսվել է՝ 11.03.2019, ընդունվել է սպագրության՝ 22.04.2019